ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-530-10.03.2023-ՊԻ-011/0*, «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-530[1]-10.03.2023-ՊԻ-011/0*) ԵՎ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-530[2]-10.03.2023-ՊԻ-011/0*) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	***ՀՀ կառավարություն***	**«Հրդեհային անվտանգության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ**	Օրենքի նախագիծը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին՝ նախագծի ամբողջ տեքստում «Տեսչական մարմին» ձևակերպումը փոխարինելով «տեսչական մարմին» ձևակերպմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	**«Հրդեհային անվտանգության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու**	Օրենքի նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 20-	Ընդունվել է:	Ընդունվել է:

		մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում «պահանջների» բառից հետո լրացնել « և կանոնների» բառով:		
3.	***ՀՀ կառավարություն***	**«Հրդեհային անվտանգության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով Օրենքի նախագծի 1-ին հոդվածի ամբողջ տեքստում «, այդ թվում՝ նորմատիվատեխնիկական,» ձևակերպումը ներառել չակերտների մեջ:	Ընդունվել է:	Ընդունվել է: